

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները.....	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ.....	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճը վերջին ամիսներին գտնվում է ցածր մակարդակում՝ պայմանավորված ինչպես նախորդ տարիների բարձր աճ ապահովող (ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքի և ՀՀ-ից վերաարտահանման աճերով), այնպես էլ ընթացիկ տարում տնտեսական աճը արագացնող գործոնների էական թուլացմամբ: Այդ պայմաններում օգոստոսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 5.6%՝ հուլիսի նկատմամբ դանդաղելով 0.6 տոկոսային կետով՝ պայմանավորված գրեթե բոլոր ճյուղերում աճերի դանդաղմամբ (բացի ծառայություններից և առևտրից): Հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ը նույնպես դանդաղել է՝ կազմելով 9.0%՝ հունվար-հուլիսի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության տեմպի հետագա դանդաղում սպասվում է նաև հաջորդ ամիսներին:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2024թ. հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.7 և 3.0 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.2 և 0.8 տոկոսային կետով:


¹ Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-օգոստոսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն²

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը կայունացել է բավական ցածր մակարդակում: Ոսկերչական գործունեության անկումից հետո արդյունաբերության աճի տեմպը մնում է բավական ցածր մակարդակում՝ հունիս-օգոստոս ամիսներին կազմելով միջինում 1.9%: Ընդ որում, նման ցածր աճի տեմպեր գրանցվում են նախորդ տարվա անկումների համեմատ: Հունվար-օգոստոս ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 13.7%՝ նախորդ ամսվա նկատմամբ դանդաղելով 2.0 տոկոսային կետով: Նման միտումների

² Արդյունաբերության աճի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

շարունակության պարագայում տարեվերջին արդյունաբերության աճն առավել ցածր կլինի՝ պայմանավորված նախորդ տարվա վերջում մեծ բազայով (աճերի էական արագացմամբ):

Արդյունաբերության հունվար-հուլիս³ ամիսների աճը շարունակել է պայմանավորված լինել մշակող արդյունաբերության աճով, որը, սակայն, աստիճանաբար դանդաղում է: 2024թ. հունվար-հուլիս ամիսներին մշակող արդյունաբերության աճը կազմել է 23.6% հունվար-հունիսի 27.7%-ի փոխարեն և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 15.5%-ով, մինչդեռ հունվար-հունիսի նպաստումը կազմել էր 18.2 տոկոսային կետ: Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտների աճերը՝ համապատասխանաբար 1.7 և 0.1 տոկոսային կետով:

Հանքարդյունաբերության ոլորտում շարունակում է գրանցվել անկում: Հունվար-հուլիսին անկումը կազմել է 8.6%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.7 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճը շարունակում է պայմանավորված լինել «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության շուրջ 3.6 անգամ աճով (հիմնականում ոսկու վերաարտահանմամբ պայմանավորված), որի նպաստումը մշակող արդյունաբերությանը կազմել է 23.9 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» և «կահույքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են ընդամենը 1.8 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաոլորտներ շարունակում են անկում ապրել: Մասնավորապես՝ անկում են ապրում այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն», «պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», «հագուստի արտադրություն», «խմիչքի արտադրություն», «մեքենաների և սարքավորանքի արտադրություն»


³ Արդյունաբերության օգոստոս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

չներառված ուրիշ խմբավորումներում» և այլ ենթաճյուղեր՝ մշակող արդյունաբերության աճին հակազդելով 2.8 տոկոսային կետով:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի, արդյունաբերության ոլորտի աճը հունվար-հուլիսին եղել է զրոյական:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը աստիճանաբար դանդաղում է, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակում: 2024թ. օգոստոսին շինարարության աճը կազմել է 16.5%՝ հուլիսի համեմատ դանդաղելով 1.2 տոկոսային կետով, իսկ հունվար-օգոստոս ամիսների աճը՝ 16.2%՝ արագանալով 0.1 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպն արագացել է: 2024թ. օգոստոսին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 9.5%՝ շուրջ 4.6 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում ծառայությունների աճը հունվար-օգոստոսին նույնպես արագացել է՝ 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 5.2%:

Ըստ հունվար-հուլիս⁴ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 19.4%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.2 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության ու կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 16.7%-ով և 9.3%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.3 և 1.9 տոկոսային կետով:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը նույնպես որոշակիորեն արագացել է: Առևտրի ռդրտում օգոստոսին գրանցվել է 14.9% աճ, որը 0.9 տոկոսային կետով բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն էականորեն ցածր է նախորդ տարվա նույն ամսվա աճից: Քանի որ առևտրի ռդրտում ևս արտացոլված են ոսկերչական գործունեության արդյունքները, ապա տարեվերջին սպասելի է առևտրի աճի տեմպերի էական դանդաղում:

2. ԱՐՏԱԻԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:


Արտահանման աճը տարեսկզբի համեմատ բավական ցածր մակարդակում է, սակայն օգոստոսին որոշակիորեն արագացել է: 2024թ. օգոստոսին արտահանման աճը կազմել է 58.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 14.2 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների արտահանման ծավալների աճը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 113.2% (2.1 անգամ):

2024թ. հունվար-հուլիս⁶ ամիսներին արտահանման աճը շարունակել է գրեթե ամբողջությամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանմամբ, որն աճել է շուրջ 7.9 անգամ՝ արտահանման աճին նպաստելով 133.4 տոկոսային կետով:

Արտահանման կառուցվածքում աճեր են գրանցվել նաև «հանքահումքային արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի գծով, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 2.9 տոկոսային կետ: Մնացած բոլոր ապրանքախմբերի գծով գրանցվել է կա՛մ զրոյական աճ, կա՛մ անկում:

Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու վերաարտահանման) ընդհանուր արտահանման անկումը խորանում է և հունվար-հուլիսին կազմում արդեն 12.1%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Ներմուծման աճի տեմպը, ի տարբերություն արտահանման, դանդաղել է:

Ներմուծման աճի տեմպը 2024թ. օգոստոսին կազմել է 18.7%՝ էականորեն ցածր լինելով ինչպես տարեսկզբի, այնպես էլ նախորդ ամսվա ցուցանիշներից: Սա կապված է մի կողմից՝ ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների նվազման, մյուս կողմից՝ այլ ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ կամ ցածր աճերով՝ կապված ներքին պահանջարկի դանդաղ աճերով:

2024թ. հունվար-հուլիս ամիսների⁷ տվյալներով ներմուծման աճը, արտահանման նման, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 9.1 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 87.5 տոկոսային կետով:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումը ներմուծման աճին եղել է բավական փոքր՝ շուրջ 2.3 տոկոսային կետ: Ներմուծմանը մյուս ապրանքախմբերի գծով նպաստումները կա՛մ զրոյական են, կա՛մ բացասական:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁸

Աշխատավարձի աճը շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.7%-ով (հունվար-հունիսի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 280,066 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.4%-ով (հունվար-հունիսի համեմատ դանդաղել է 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 305,674 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 216,251 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.5%-ով:

⁷ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-հուլիսին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժեւորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





ՀՀ դրամի փոխարժեքը վերջին ամիսների ընթացքում շարունակում է բավական կայուն մնալ: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ մայիս-օգոստոս ամիսներին մնացել է կայուն՝ միջինում 388 դրամի մակարդակում: Այդ պայմաններում ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ արժեզրկված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 1.3% և 1.2%-ով: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը նույնպես մայիս-օգոստոս ամիսներին եղել է կայուն՝ մեկ ռուբլու դիմաց միջինում 4.4 դրամ մակարդակում՝ մինչև նույն ժամանակ լինելով արժևորված նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 10.7%-ով: Ռ-Դ ռուբլու համեմատ ՀՀ դրամը գերարժևորված է բավական երկար ժամանակահատված, ինչը բնականաբար բացասական հետևանքներ է ունենում հայկական ծագման ապրանքների արտահանման վրա, որոնք արդեն իսկ տեսանելի են արտաքին առևտրի վիճակագրությունում:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁹

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը որոշակիորեն արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-օգոստոսին կազմել են 1,624.0 մլրդ դրամ՝ աճելով 5.5%-ով, որը հունվար-հուլիսի համեմատ բարձր է 0.6 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-օգոստոսին կազմել է 6.0%՝ հունվար-հուլիսի նկատմամբ արագանալով 0.5 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների գծով նվազումը խորացել է՝ կազմելով 6.7%, իսկ պաշտոնական դրամաշնորհները աճել են 27.9%-ով:

⁹ ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից, 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-օգոստոսին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 9.9%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ շուրջ 2.0 անգամ) և շահութահարկի (աճը՝ 4.0%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7, 1.9 և 0.7 տոկոսային կետ:

ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-օգոստոս ամիսներին նվազել են համապատասխանաբար 3.2%-ով և 2.7%-ով՝ ընդհանուր հարկային եկամուտներին հակադրելով 1.0 և 0.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ներմուծման նվազմամբ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-օգոստոս		2024թ. հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	16.1	16.1	6.0	6.0
Ավելացված արժեքի հարկ	17.2	5.5	-3.2	-1.0
Ակցիզային հարկ	15.4	0.9	-2.7	-0.2
Շահութահարկ	45.2	6.1	4.0	0.7
Պետական տուրք	-50.1	-3.2	20.7	0.6
Մաքսատուրք	33.1	1.0	0.5	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-51.2	-2.4	98.6	1.9

Այլ հարկեր	38.1	1.1	10.3	0.3
Շրջանառության հարկ	30.1	0.7	16.7	0.4
Եկամտային հարկ	18.8	5.0	9.9	2.7
Սոցիալական վճարումներ	44.4	1.4	15.3	0.6

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը փոքր-ինչ նվազել է, սակայն շարունակում է մնալ եկամուտների համեմատ էականորեն բարձր մակարդակում: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-օգոստոս ամիսներին կազմել են 1,708.6 մլրդ դրամ՝ աճելով 16.4%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը նվազել է 1.0 տոկոսային կետով): Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 14.4%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 12.6 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպը շարունակել է մնալ բարձր՝ կազմելով 29.8% և ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.8 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), մլրդ դրամ



Բյուջեի ծախսերը շարունակում են էականորեն բարձր մնալ եկամուտներից, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդն աճում է: 2024թ. հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 84.6 մլրդ դրամի չափով պակասուրդ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն հավելուրդային էր և կազմում էր շուրջ 71.6 մլրդ դրամ:

5.4. Պետական պարտք


2024թ. օգոստոսին ՀՀ պետական պարտքի անվանական ծավալի աճի տեմպն արագացել է: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 12.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճելով 9.5%-ով (նախորդ ամսվա աճը՝ 8.7%): Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում հասել է 11.9 մլրդ ԱՄՆ դոլարի՝ աճելով 10.1%-ով (նախորդ ամսվա աճը՝ 9.4%):

Պարտքի աճը տեղի է ունեցել ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 30.1% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է նվազել՝ շուրջ 5.1%-ով: Արդյունքում օգոստոսի վերջի դրությամբ ներքին պարտքի կշիռն ընդհանուր պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 51.6%:

2024թ. օգոստոսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները փոքր-ինչ կայունացել են: Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազմանը զուգահեռ, սովորաբար նվազում են նաև պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքները (եկամտաբերությունը): Վերջին ամիսներին այդ կապը նույնպես պահպանվում է, և

պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նվազում են: Կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման միջին տոկոսադրույքը օգոստոսին կազմել է 8.8%՝ նախորդ ամսվա համեմատ մնալով գրեթե նույն մակարդակում, իսկ նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազել է 1.6 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազել են 1.0 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը մնում է ցածր մակարդակում: Վերջին ամիսներին գնաճի տեմպը դարձել է դրական, սակայն պահպանվում է բավական ցածր մակարդակում: 2024թ. օգոստոսին գնաճը նախորդ տարվա օգոստոսի համեմատ կազմել է 1.3%՝ 0.1 տոկոսային կետով դանդաղելով հուլիսի համեմատ: Արձագանքելով ցածր գնաճին և համապատասխան սպասումներին՝ Կենտրոնական բանկը շարունակում է նվազեցնել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Վերջին նվազեցումը տեղի է ունեցել սեպտեմբերի 10-ին, որի արդյունքում տոկոսադրույքը հասել է 7.5%-ի՝ տարեսկզբի 9.25-ի համեմատ:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը մնում է ցածր մակարդակում: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.5%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճի տեմպը որոշակիորեն արագացել է՝ կազմելով 4.1%՝ նախորդ ամսվա 3.8%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 12.3% և 4.8%: Ընդ որում, ոչ ռեզիդենտների ավանդների ծավալի աճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ նախորդ ամսվա 11.4%-ի դիմաց: Հուլիսի համեմատ օգոստոսին ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 5.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթային ավանդների նվազմամբ:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. օգոստոսին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 5.4 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 17.0%, ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.7 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը որոշակիորեն արագացել է: 2024թ. օգոստոսին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 20.6%-ով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալի աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 11.6%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել հիմնականում ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 22.1%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 21.0 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտների վարկերը նվազել են շուրջ 6.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ իրավաբանական անձանց, և՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 22.9% և 21.4%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 11.4 և 10.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




Օգոստոսին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել հիպոթեքային (26.2%) և սպառողական (22.1%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 5.5 և 4.9 տոկոսային կետով: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճում են գրեթե բոլոր ճյուղերում: Ընդ որում՝ սկսել է աճել նաև արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը, որի տեմպը օգոստոսին կազմել է 5.6%՝ ընդհանուր վարկերին նպաստելով 0.6 տոկոսային կետով: Արդյունաբերության վարկերի աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտում վարկերի աճով, իսկ մշակող արդյունաբերության վարկերը շարունակել են նվազել:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը վերջին ամիսներին մեծացել է, սակայն դեռևս ցածր է մնում նախորդ տարվա ցուցանիշներից: 2024թ. հուլիսին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 163.3 մլն ԱՄՆ դոլար՝ շուրջ 17.2 մլն դոլարով անելով նախորդ ամսվա համեմատ և 22.4%-ով բարձր լինելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Սակայն հունվար-հուլիս ամիսների զուտ ներհոսքը դեռևս ցածր է նախորդ տարվա ցուցանիշից շուրջ 26.4%-ով՝ հիմնականում պայմանավորված դրամական միջոցների ներհոսքի կրճատմամբ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչպես և սպասվում էր, տնտեսական ակտիվության աճի տեմպն աստիճանաբար դանդաղում է, քանի որ բարձր աճ ապահովող գործոնները գրեթե ամբողջությամբ չեզոքացել են: Հաշվի առնելով այն, որ այդ գործոններից մեկը՝ ոսկերչական արտադրատեսակների վերաարտահանումը սկսվել էր նախորդ տարվա վերջում, ինչի արդյունքում ձևավորվել էր բարձր բազա, տնտեսական աճի տեմպերի դանդաղումը, հատկապես արդյունաբերության և առևտրի ոլորտներում, մինչև տարեվերջ ավելի կխորանա:

2. Արտահանման ցուցանիշները նույնպես մտահոգության տեղիք են տալիս: Առանց ոսկերչական գործունեության («թանկարժեք և կիսաթանկարժեք

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2024թ. օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի) ընդհանուր արտահանման անկումը կազմել է 12.1%: Սա բավական մտահոգիչ է, քանի որ, բացի «հանքահումքային արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերից, մնացած ուղղություններով արտահանման ծավալները բացասական կամ գրեթե զրոյական նպաստումներ են ունենում ընդհանուր արտահանման աճին՝ արտացոլելով ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի մրցունակության անկումը:

3. Վարկերի աճի կառուցվածքը շարունակում է մտահոգիչ մնալ: 2024թ. օգոստոսին հիպոթեքային և սպառողական վարկերի աճի տեմպերը արագացել են՝ առանց այդ էլ բարձր մակարդակներից: Այդ տեսակի վարկերը ուղղվում են տնային տնտեսություններին, որոնց եկամուտները համապատասխան չափով չեն աճում, ինչը միջնաժամկետում կարող է ֆինանսական համակարգում էական խնդիրների հանգեցնել: Միևնույն ժամանակ, արդյունաբերությանը տրվող վարկերի ծավալների աճը, թեև օգոստոսին մտել է դրական տիրույթ՝ հանքարդյունաբերության ոլորտում տրված վարկերի հաշվին, բավական ցածր մակարդակում է, իսկ մշակող արդյունաբերության ոլորտի վարկերը շարունակում են նվազել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: